

ՄԵԼԿ

Տարեկան գինը 7 րուբլ, կէս տարվանը 4 րուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծառուկեանի և Արասխանեանի խանութում

Օտարաբաղադրացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелк“

խմբագրատունը բաց է առաջօրեան 10—2
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄԵԼԿ

Լրագրի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
խնդրում է այն բաժանորդ-
ներին, որոնք այս ամբողջ տարվայ կամ
կէս տարվայ բաժանորդական գինը լիովին չեն
տուել խմբագրութեանը, շտապէն լրացնել
իրանց բաժանորդագինը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս հեշտ է սխալվել, — ն երբ ին տե-
սուած թիւն: Պատերազմական բեմից: Հաշիւ
Թիֆլիսի մասնաժողովի Նամակ հոշուց: Նա-
մակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին
լուրեր: Արտաքին տեսութիւն: Գերմա-
նական համալսարանները: Թիւրքիա: Աւստրո-
Ունգարիա: Ֆրանսիա: Յայտարարութիւններ:
— Տեղեկացոյց:

ԻՆՉՊԵՍ ՀԵՇՏ Է ՍԻՍԼՎԵԼ

II

Նոյն երևոյթը որ պատահել է
Բօլզարիայում, պատահել է և
Հայաստանում: Ուստաց զօրքերը
մոնետով Հայաստան զարմացան
պատահելով հարուստ հայոց գիւ-
ղերի, որոնց նման ուստաց Հա-
յաստանում չը կան... Այդ գիւ-
ղերը ունեն ահագին տարածու-
թեամբ հողեր, գիւղացիների տը-
ները լաւ շէնած են, նրանց գոմերը
լի են կենդանիներով, տմբարները
լի խոտով և ցորենով, պահեստ-
ները լի խորով, պանիրով, մեղրով
և այլն: Այն գաղթականներից,
որոնք անցել են նորերում մեր
սահմանները, փախչելով բարբարոս
քիւրդերի արիւնահեղ արշաւան-
քից, շատերը բերել են իրանց հեռ
մինչև քառասուն կամ յիսուն եգեր
և գոմէշներ, առատութեամբ կահ-
կարասիք և այլն, թէև գաղթա-
կաններից մեծ մասը ի հարկէ զուրկ
է ամենահարկաւոր բաներից:

Այժմ հարցնում ենք՝ ինչով
կարելի է բացատրել այն երևոյթը,
որ մի կողմից Թիւրքիայի հայ գիւ-
ղական ազգաբնակչութիւնը այդ-
քան հարուստ է երևում, իսկ միւս
կողմից Հայաստանի ազգաբնա-
կութիւնը քանի գնում է թւով
նուազվում է, անդադար գաղ-
թում է...

Այդ երևոյթը դարձեալ ամե-
նալաւ ապացոյց է որ մի երկրի
անտեսական բարօրութեան վրա
պարզ հասկացողութիւն կազմելու
համար բաւական չէ աչքի առջև
ունենալ միմիայն այն երկրի առ-
երևոյթ արտաքին անտեսական
կեանքը: Անցաւոր հայեացք զցե-

ղով հայերի դրութեան վրա Թիւր-
քիայում, տեսնում ենք որ այն-
տեղի հայոց գիւղական ազգաբնա-
կութիւնը հարուստ է, մեծ հողեր
ունի և այլն, — բայց մի և նոյն
ժամանակ հայերը անհետանում
են Հայաստանից, նրանց թիւը
օրից օր նուազվում է, նրանք ան-
դադար գաղթում են: Դա ապա-
ցոյց է որ Թիւրքիայի հայերի
մէջ հող ունեցողները, հարստու-
թիւն վայելողները, կալուածատէր
գիւղացիները, երջանիկ իրանց հա-
մարդները սակաւամասնութիւն են
կազմում, իսկ մեծ մասը, որ կամ
ստիպված է ապրելու իրաւունք
ունենալու համար մահմետակա-
նութիւնն ընդունել, կամ բազմու-
թեամբ գաղթել իր հայրենիքից,
կամ հայրենիքում մնալով կորչել,
անհետանալ, սովից մեռնել, — այդ
մեծ մասը և կազմում է այն ան-
հող, անտուն, սեփականութենից,
կալուածներից և ամեն կայքից
զուրկ ազգաբնակչութիւնը, պրօ-
լէտարիատը: Առհասարակ յայ-
տնի է որ պրօլետարիատը կազմ-
վում է խիտ ազգաբնակչութիւն
ունեցող երկրում, որտեղ պատ-
մական հանգամանքների շնորհով,
հողի սեփականութիւնը անհաւա-
սար կերպով բաժանված է եղել
ժողովրդի զանազան դասակարգերի
մէջ: Բայց պրօլետարիատը կարող
է կազմվել և արուեստական կեր-
պով, վարչական անարդարութեան,
վատ կառավարութեան, տէրու-
թեան ճնշման շնորհով: Թիւր-
քիայի հայոց գիւղական ազգա-
բնակչութիւնը Թիւրքաց վարչու-
թեան պաշտօնեաների և ամբողջ
վարչական անպիտան սխտեմայի
կամայականութեան զօժ է լինում:
Հայաստանում հարկերը շատ
ծանր են և անարդար: Հայը հարկ
է տալիս իր հողից, որ պարտքի
տակ ընկած է, իր տունից, որ մի
քուրդ բէյի մօտ գրաւ դրած է,
իր ոչնչանների հօտի իւրաքանչիւր
գլխից, չը նայելով որ այն հօտը
աւազակներից յափշտակված է, իր
հունձքից, չը նայելով որ այն հունձ-
քը քուրդերի ձեռքով այրված է:
Պատահել են օրինակներ, որ հայը
տէրութեանը հարկ տալու համար
ոչ թէ միայն պէտք է տան կահ-

կարասիք ծախէր, այլ մինչև ան-
գամ տան պատերը քանդէր, պա-
տերի միջից գերանները հանէր, և
այդ գերանները ծախէր, որպէս զի
տէրութեանը հարկ տար...

Պրօլետարիատի կազմվելու պատ-
ճառները կարող են տարբեր լինել,
բայց նորա սկզբունքը և հետևանք-
ները նոյն են: Բալտեան գաւառ-
ներում և Իրլանդիայում, ինչպէս
ասած էինք մեր լրագրի անցեալ
համարում, պրօլետարիատը կազմ-
վեցաւ պատմական — տնտեսական,
թէև անարդար բայց բնական հան-
գամանքների շնորհով: Թիւրքաց
Հայաստանում պրօլետարիատը,
ոչ տուն, ոչ տեղ, ոչ հող, ոչ կայք
ու կենդանիներ ունեցող գիւղացի-
ներից բաղկացած դասը, կազմվե-
ցաւ Թիւրքաց տէրութեան գի-
տակցական ճնշման և քուրդ ցե-
ղերի աւազակութեան և հարստա-
հարութեան շնորհով:

Հետևանքը նոյն է՝ որտեղ
կազմվում է անհող և ոչինչ սե-
փականութիւն չունեցող գիւղա-
կան դաս, նա կամ պէտք է իր
հայրենիքում օրական աշխատանք
գտնէ, որպէս զի ապրել չարունակէ,
կամ եթէ այդ անել չէ կարող,
պէտք է գաղթէ:

Իհարկէ Իրլանդիայում և Բալ-
տեան նահանգներում գաղթակա-
նութիւնը հող չունեցողն է համար
վերջին միջոցն է, իսկ մինչև
գաղթականութեանը զիմելու նա
ունի հազար ու մէկ ճանապարհ-
ներ իր ապրուստը հայթայթելու
համար: Այնտեղ նա կարող է
ուրիշ մօտ աշխատել, արուեստ-
ներով պարսպել, օրական վարձ
ստանալ մի որ և է աշխատան-
քից: Բայց Թիւրքաց Հայաս-
տանի պէս անտեսապէս անդար-
գացած և ճնշված երկրում, հէնց
որ գիւղացին իր հողից և բոլոր
սեփականութիւններից զրկվեցաւ,
նա պէտք է գաղթէ, որովհետև
նա իր աշխատանքի համար իր
հայրենիքում գործադրութիւն չի
գտնի...

Դորանով բացատրվում է այն
ընդհանուր, համանման երևոյթը
որ ներկայանում է մեր առջև
թէ Բօլզարիայում և թէ Հա-
յաստանում:

Երկու երկիրներն էլ կորցրել
են իրանց աշխատատէր ազգա-
բնակչութեան մեծամասնութիւնը,
նոքա ամեն բանից զրկված, բաղ-
ցած, գաղթականութեան գաւա-
զանը ձեռքին, օտար երկիրներում
իրանց համար ապաստան են որո-
նում: Երկու երկիրների ազգա-
բնակչութիւնն էլ այսպիսով նուազ-
վում է, անհետանում է, ոչնչանում
է, — բայց մի և նոյն ժամանակ հայ-
րենիքում մնացած բնիկ ազգաբ-
նակչութեան սակաւամասնութիւնը
հարուստ և երջանիկ է երևում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Աւաջայի բարձրութիւնների վրա հոկ-
տեմբերի 3-ին եղած ճակատամարտի ժամա-
նակ, երբ Մուխթար-փաշայի զօրքը ջարդ-
վեցաւ, տեղական ուսու լրագրիներից ստա-
ցած մասնաւոր հեռագիրներին նայելով մեր
ձեռք գերի ընկան Թիւրքաց զօրքի 26
բատալիօն, 8 փաշաներ, 200 աւել օֆի-
ցերներ, 32 թնդաւթներ, մի քանի դրօ-
շակներ և հազարաւոր հրացաններ: Հետե-
ւեալ հեռագիրներից յայտնվում է որ ընդա-
մենը գերի ընկած Թիւրքաց զօրքի թիւը
հասնում է 7000 հոգու: Սկզբից կարծես
անհասկանալի է թվում թէ ինչպէս 26 բա-
տալիօն կարող են միայն 7000 մարդ պա-
րունակել, բայց այդ երևոյթը հասկանալի է
դառնում, երբ աչքի առջև ունենանք նախ
որ Թիւրքաց բատալիօնը երբէք 1000 հո-
գուց բաղկացած չէ լինում, այլ շատ շատ
500 հոգուց, երկրորդ ընդունենք թէ Մուխ-
թար-փաշայի զօրքը մասամբ նուազվել է
զանազան հիւանդութիւնների, սօղաւտների
զօրքից փախչելու և այլ կորուստների պատ-
ճառով, վերջապէս յիշենք որ սեպտեմբերի
20-ին և 21-ին եղած ճակատամարտերի ժա-
մանակ Մուխթար-փաշան բաւական զօրք է
կորցրել, — կը հասնենք այն եզրակացութեանը
թէ շատ հաւանական է որ Աւաջայի վրա
ճակատամարտի ժամանակ Թիւրքաց իւրա-
քանչիւր բատալիօնը միջին թւով միայն
200—300 հոգուց էր բաղկացած: Եթէ հաշ-
ւենք մինչև անգամ 300 մարդ իւրաքանչիւր
բատալիօնի մէջ, այն ժամանակ Մուխթար-
փաշայի զօրքից գերի ընկած 26 բատալիօնը
հաւասար կը լինի 7800 մարդու: Այդպէս
էլ յայտնված էր հեռագրի մէջ թէ՛ մեր
զօրքերի ձեռք գերի ընկան 26 Թիւրքաց
բատալիօններ: «С. Петерб. Вѣд.» լրագրին
հոկտեմբերի 11-ին հեռագրում են Ալեք-
սանդրապօլից, թէ վերջին ճակատամարտի
ժամանակ ուստաց զօրքը այնքան մեծ քա-
նակութեամբ պաշար է վեր առել Թիւրքի-
րից, որ հրամայած է առ ժամանակ ընդ-
միջը զօրքին պաշար ուղարկել:

ՀԱՇՅԻ ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԹԻՒՐ-
ԲԻԱՑԻՑ ԳԱՂԱՅ ԲԻՍՏՈՆԵՆՆԵՐԻ ՕԳՆՈՒ-
ԹԵԱՆ, ՄԻՆԶԵԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ը 1877 Թ.

ՄՈՒՏԲ

Բ. Կ.

Օգոստոսի 18 Ա. Անանովից ստորա-
գրութեամբ ժողոված 9531 93

— Կ. Բէրուժովից ստո-
րագրութեամբ հաւաք-

ված. 204 —

— Բ. Սուրբուհովից ստո-
րագրութեամբ հաւաք-

ված. 689 —

— Առևտրական բանկի
տոմսակներ թողարկ. 41 72

23 Կ. Արծրունուց ստո-
րագրութեամբ հաւաք-

ված. 323 21

Սեպտեմբ. 5 Գոմբորի հասարակա-
թեանց 72 17

— Լ. Մէլք-Բէլարովից
արուեստաւորներից հա-

ւաքված. 40 —

— Գ. Արծրունուց ստո-
րագրութեամբ հաւաք-

ված. 100 —

— Կ. Բէրուժովից ստո-
րագրութեամբ հաւաք-

ված. 106 —

16 Թիֆլիսի ժողովից Թիֆ.
Առևտ. բանկի տոմս. 1601 —

— Առևտրակ. բանկից զը-
նուսնակի տոկոսից. . . 11 48

— Գ. Արծրունուց ստո-
րագրութեամբ ժողո-

ված. 797 13

— Բ. Սուրբուհովից ստո-
րագրութեամբ ժողո-

ված. 764 —

23 Ա. Յովհաննիսեանից
ստորագրութեամբ ժո-

ղոված. 700 —

— Ա. Անանովից Ասորա-
կանի մէջ ստորագրու-

թեամբ ժողոված. . . 1447 —

30 Սեպտեմբերի 29-ին Ա.
Լեւոնյանից արդիւմ

տուած ժողովական
զբօնակից. 4472 —

Ընդամենը 20,900 64

ՄԱՍ

Բ. Կ.

Սեպտեմբերի 5 Աւարկիւմէ Ե. Նրեան
Յ. Խաթաթովի փոխա-

նակադիր Սոլոմոն Մէ-
լքովի փաստի ծախսով 1000 23

7 Տուած է Կ. Գոմբա-
րովի ժողովական

զբօնակից պատրաստու-

թեան համար. 200 —

15 Տուած է Գ. Արծրու-
նուի գիւնատան ծախ-

սերի համար. 100 —

— Վաքարէ Ե. Նրեան ու-
ղարկված գեղերի ճա-

նապարհի ծախս. . . 23 —

19 Տուած է Ս. Սալամ-
բէկովի ժողովական

զբօնակից պատրաս-
տութեան համար. . . 300 —

— Աւարկիւմէ Ե. Նրեան Յ.
Խաթաթովի փոխա-

նակադիր Զաքարիա Գէ-
ւորդովի փաստի ծախ-

սով. 2000 23

20 Տուած է Կ. Սուրբա-
ֆովի զաղթականների

համար տուած ապ-
րանքի համար, հաշիւ

№ 128 4108 80

22 Տուած է Յ. Չիթա-
խովի ժողովից, զբո-
նակիցի համար տուած

իրեկէնների համար. . 34 20

— Յ. Չիթախովի զաղ-
թականների համար

տուած ապրանքի հա-

մար. 855 45

— Մշակներին. 3 50

23 Պ. Գուրգուրեզովին
Ֆէլեքերի համար. 100 —

— Տուած է Կ. Գոմբարո-
վի ժողովական զբո-

նակից պատրաստու-

թեան համար. 200 —

— Թիֆլիսի Առևտրական
բանկի ընթացող հաշ-

ւում. 14,962 —

— Առևտրական փող կա-
պույտ. 13 23

Ընդամենը 20,900 64

Նախագահ Ա. Անանով

Գանձապահ Յ. Չիթախով

ՆԱՄԱԿ ՀՈՒՇՈՒՑ

Հոկտեմբերի 5-ին

Արդէն ձեռք յայտնի է, որ օգոստոս ամսի տա-
ւից ընդունած եմ Վարդապետի զարդաների տե-
ւից ներկայ տարուս յուլիս ամսի 15-ին առա-
ջարկած հրապարակած ռուսացական արշաւան
նոր տեղի Հոգեւոր Ազգային Օրինագրայ Կարգու-
թեան:

Թէն դեռ եւս չուտ է քննութեան ենթարկել
զարգի կազմակերպութիւնը թէ ուսումնական
և թէ վարչական կողմից, իմանալով քաջ, որ
այսպիսի մի ձեռնարկութիւն իր հաստատու-
թիւն և ապահով ապագայ ունենալու համար
հարկաւոր է եթէ ոչ տարեկան, գոնէ երկար տ-
մաներ, բայց ուսումնարանը ստանալով այս
կարծ միջոցում առանձին մի կազմակերպութիւն,
ստիպում է ինձ համառոտ կերպով պայման
նորա դրութեան մասին տեղեկութիւն տալ ձեզ:

Այստեղ ունենք երկու օրինակից զարգի, մէկը
Խորեն, իսկ միւրը Սիւրբնեան վարդապետի հիմ-
նած: Խորենի հիմնածը արդէն կառավարութեան
իշխանութեան ներքոյ է և բոլոր առարկաները
աւանդվում են ուսուցիչ լեզուով, առանց դարձ-
նելու այն կարեւոր ուղարկութիւնը մայրենի լե-
զուի վերա, որ մանկավարժական գիտութեան
մէջ համարվում է բնութագրական և ճշմա-
րիտ առաջադիմութեան հիմքը:

Իսկ Սիւրբնեան վարդապետի հիմնածը որի
մէջ չորս ամիս սորանից առաջ 20—25 չա-
ւոր ծնողաց երեխաներ էին և գտնվում էր Սե-
մյանի բազում երկու փոքրիկ սենեակի մէջ,
այժմ անխնայ աշխատութեամբ ուսումնարանի
հոգաբարձուների և տեսչի ստացել է այն ըն-
դարձակութիւնը, որ շատ անսովոր երեւոյթ է
մեր արդեան հայկական կեանքի մէջ և որ դե-
ղեցիկ օրինակ կարող էր լինել մեր շատ յետա-
դէմ և օտարապէս եղբայրակիցներին և քոյրե-
րին: Մեր օրինակից զարգի, այժմ գտնվում է
իշխան կարգապետի հոգապետ ամեն երկու գա-
ւառան բաժանված՝ առաջինի և պատրաստա-
կանի: Առաջինում աւանդվում է կրօն, հայոց
լեզու, հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն
հայոց և ընդհանուր, ուսուցիչ և ֆրանսիական լե-
զու, թեաքանութիւն, ձեռագործ, գծագրութիւն
վաշիշակագրութիւն, պար և երգեցողութիւն: Իսկ
պատրաստականում, որ յիսուսից աւելի աշա-
կերտուհիք ունի, աւանդվում է կրօն, հայոց լե-
զու, նկատողական ուսում, թեաքանութիւն, և
այն մանուկների զարգացմանը նպաստող ա-
ռարկաներ:

Պատրաստական դաստառունը, անօրինու-
թեամբ ուսուցչական ժողովի որի նշանակու ա-
ղաձմերն են հետեւեալ պարաները՝ Զ. Իշխա-
նեան, Ս. Թովմասեան, Գ. Պապեան, բաժան-
վում է երեք բաժանմունքի՝ առաջինի, երկրորդի
և երրորդի այն դասերն և ժամերն ցուցակով, որի
օգնութեամբ վարժապետը կարող է պարագիւ-
մի և նոյն միջոցը առանց ժամանակի կորստեան
և վնասակար խանգարման բոլոր բաժանմունքի
հետ միանգամայն:

Թէ այսպիսի մշտապէս հաստատութիւնը
պահպանող և մանկավարժական կանոնների հա-

մաձայն տնտեսութիւնը ուսուցչական ժողովի
որքան ալսօր եւս արդեանաբար է, այդ կը լինի,
յոյսով ենք անդայտնի մինչև անգամ նաև այն-
պիսի անձինքներին, որոնք թէ գիտակցաբար
և թէ անգիտակցաբար հերքող են նախա-
նում օգուտներին մանկավարժական ընդունե-
լութեանց: Մի խօսքով, այսպիսի մի երեւոյթ
չափազանց ուրախալի է թէ մեզ և թէ Շուշու
հայ ժողովրդի համար, որով ապացուցվում է, որ
ճշմարիտ և բնականապէս երեխայաց զարգաց-
ման և ուսման համար անհրաժեշտ պայման է
ուսուցչական լեզուի: Վերջացնելով նամակս
թիւլ եմ տալիս ինձ ձեր թերթի միջոցով հրա-
ւերել հայրենակիցներին Շուշու այս օրինակին
հետեւել:

Եղիաբէթ Արիստեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՆ

Շուշու, Հոկտեմբ. 10-ին

«Մշակի» 70 համարում կարդացի մի թղթ-
թակցութիւն Շուշուց Մ. Կ. ստորագրութեամբ,
Յօդուածագիր պարոնը իբր թէ դէպի ինձ ուղ-
ղած շղթարթական խօսքեր գտնելով «Մշակի»
65 համարում տպած Գ. Տ. Գ. ստորագրու-
թեամբ (և այն պարոնի առեւով կեղծված նա-
մակագիր) յօդուածի մէջ, վառված վրէժխնդրու-
թեամբ կամենում է ստույգներ յանդիմանել:
Կարոնի բոլոր բարկութիւնը նորանում է, որ
պ. Բաբաջանեանցին տալիք աշխատութիւնը
օրինակական զարգի բարեկարգութեան նիւտ-
մամբ ինձ է տուած, ինձ, որ երբեք զարգից ոտը
էլ զբաժ չեմ, որ ամենին մի կարգադրութիւն
արած չեմ նորա համար, որ մինչև պ. Բաբա-
ջանեանցի գալը ընկած էր երեւոյթ վերա, մովթ,
խոնաւ և կեղտոտութեամբ չբնագրած սե-
նեակի մէջ, և որ նորանից մինչև անգամ չաճ-
վել եմ նիւթական միջոցներով—նորա խալի խա-
լիաներով, վիճակարկութեան արդիւնքով և ա-
նեղագործ նիւթերով: Առաջին Գ. Տ. Գ. պա-
րոնի յօդուածը, ինչպէս յիշում են ընթերցողը,
ոչ մի գովեստ չունի ուղղած դէպի ինձ, այն-
տեղ ասված էր, որ վիճակարկութեան հանդի-
սին և հարցաքննութիւններին նախագահել եմ
կամ տեսչի պաշտօնն եմ վարել. իսկ այս մի
այնպիսի չնչին ծառայութիւն է, որ չէ կարող
չորդարթից գովեստ վերցնել, հետեւաբար և ան-
տեղի էր այդ մասին այնքան բարկութիւնը:
Երկրորդ անիւթը օրէն հաւատացնում եմ և պ.
նամակագրին և ընթերցողներին որ մինչև այսօր
չեմ ծառայել և չը պիտի ծառայեմ հրապարա-
կական գովասանութիւններ և հնորակալութիւն-
ներ վատապիւր համար. իմ միակ ձգտումն
եղել է և կը լինի իմ կարողութեան ներքաժի չափ
ինձ յանձնված պաշտօնը վարել այնպէս, որ
խղճի, ժողովրդի և իշխանութեան պահանջների
գէմ մեղանչած չը լինեմ, և կարծեմ, որ ինձ ծա-
նադրներից շատերը կը վկայեն, թէ եւս որչափ
խորշում եմ այս կամ այն դէպքում ցոյց տուած
համեմտ կամ լաւ ևս առեւ անչառ ծառայու-
թիւնը հրապարակական թերթերում տեսնելուց,
ի գուր էր այնքան տագնապում պ. Մ. Կ. ինձ
հարկաւոր է տեսնել միայն իմ զարգից բարե-
կարգ և նպատակած ծառայող. այնուհետեւ, եթէ
կամենում էր, եւս եւս պարտաւոր էի ամեն աշ-
խատութիւն և ջանք պիտի տալու ալ պ. Բա-
բաջանեանցին ոչ միայն նորա տեսչութեան
սկսած օրից, այլ, եթէ կամենում է մինչև ան-
գամ այն ժամանակակից, երբ պարոնը դեռ նոր
էր մտածում վաղաբաւապայից միջնորդներ ձգել
այդ տեղի իրան տալու համար. բայց եթէ ճշ-
մարտութիւն է կամենում յայտնել պ. Մ. Կ.
անա պղծ ճշմարտութիւն:

1. 1876 թվականի փետրվարի 28-ին Շուշում
ոչ հոգեւոր օրինակական զարգի կար, ոչ պ. Բա-
բաջանեանց: Այդ զարգից բացել է Վ. Ն. Կա-
թողիկոսի հրամանով հ. Գեորգ վարդապետ Սու-
րենեանց 1876 թվ. մայիսի մէկին, կարգելով
նորանում անվարձ ուսուցչի կերպ ծանաւա-
ներ, իսկ ամսական քսան և հինգ բուրլի վար-
ձով տիկին Զարի Սարգսեանցին ձեռագործու-
թեան վարժուհի. և աշակերտութիւնը ժողովել
էին այդտեղ մօտ քսան և հինգ հոգի. Հ. Սու-
րենեանց չունելով նախապէս որոշած աղբիւր
այդ զարգից պահպանութեան համար, կամա-
ւոր նուիրատուութիւններով և մի քանի աշակեր-
տութիւններից սկսելով ստացած տարեկան վճար-
ներով հոգացել էր համար. Զարի Սարգսեանց
յոյնի ամիսներով համար. իսկ յուլիսի 10-ին
թողնելով իր պաշտօնը ուղևորվում է դէպի Էջ-

միածին: Հոգ. ծայրագոյն իշխանութեան կար-
գադրութեամբ նորա տեղը նշանակված լինելով
եւս մի և նոյն ժամանակ ունեւով ինձ վերա և
թեմական վերառեալի պարտաւորութիւնը ծա-
մանակաւորապէս, մուտք գործեցի Շուշու նոյն
յուլիսի 28-ին: Արդէն արձակված էին աշակեր-
տութիւնը. մի ամիս էր նաւում մինչև սեպտեմբեր
և այդ կարճ միջոցում պէտք էր հոգա անել,
Չունելով ոչ մի կօպէլ արդիւնք այդ զարգից
համար, անկարելի համարելով գեռ այնպիսի
խառնաշփոթ ժամանակում դիմել ժողովրդին,—
որ դեռ սպասում էր տեսնել թէ որ կուսակ-
ցութեան կը պատկանեմ եւս, որ ամեն մի քաջ-
լում կամենում էր չափել և քննել իմ ընթացքը
և ուղղութիւնը, և որ ունեւով արդէն մի այլ
օրինակական զարգի ապահոված ամեն կերպ, ոչ
մի ուղարկութիւն չէր կամենում դարձնել աղ-
քաթիկ, դժուած, երկամեայ և այն հոգ. զարգի
վերա,—եւս պէտք է յանձն առնել նորա կառա-
վարութիւնը ինձ վերա առանց մէկին խօսեց-
նելու. ոչ զրաւական միջոցը և ոչ ժամանակը
չէին ներքում ինձ զուրկից վարժուհի հրաւիրել:
մանաւանդ որ հ. Սուրենեանցի կարգած տի-
կինը մեծ համարումն ունեւով աշակերտութեան
ծնողած մօտ, նորա հրաժարվելը բուն սկզբից
պիտի աշակերտութիւնների ցրվելու պատճառ լի-
նէր. այս հանգամանքներից ստիպված եւս նրան
հաստատեցի իր պաշտօնի մէջ. միայն ինչպիսի
առնելով որ դաստառը քահանայքը պիտի զը-
ժուարանան շարունակել այդտեղ իրանց պաշ-
տօնը, եւս նոյն տեղ կարգեցի ծխակաւ զըպ-
րոցի երկու ուսուցչիներ պ. Գրիգոր Տէր-Վաղա-
րեանցին և պ. Ղուկասեանցին, որոց մի-
ամեայ ձրի և սրտեւանդ աշխատութեան համար
եւս հրապարակաւ յայտնում եմ ինձ շնորհա-
պարտ Այս մասնաւոր փոփոխութիւնը սկզբում
սպասեցաւ ի հարկէ զարգից աշակերտութիւ-
նների նաւաւանք, որովհետեւ ծայն տարածվեց
ամեն տուն, թէ «աշխարհական տղերք են մտել
այնտեղ» և այլն. և այդպիսով մենք սեպտեմբեր
ամսում ունեցանք միայն վեց աշակերտութիւններ,
բայց շարունակից գաստաւորութիւնը իր կարգով.
Իսկ եւս շտապեցի կարգել զարգից տեսուչ բա-
րեկ. Սիմէոն քահանայ Տէր-Խորաթեանցին, որ
և կրօնաւարդ էր. և որովհետեւ նա վարչական է
մեծ յարգ գերադասութեան մէջ էր համեմտ և
խոհմ վարք ու բարքով, ուստի մի կողմից նորա
ապահովացուցիչ յորդորներով, միւս կողմից վար-
ժուհի տիկնայ տարան և նորան խնդրելով կարճ
միջոցում ոչ միայն զարգից աշակերտութիւններ
վերադարձան, այլ և նորերը լցվեցան, այնպէս
որ շուտով նոյն թիւը անցաւ քառասունից և ոչ
ինչպէս պ. Մ. Կ. է տուած՝ 14: և այսպէս պահ-
պանեցի այս զարգից մինչև ներկայ տարվայ
յուլիս ամիսը, երբ յանձնեցի հոգ. զարգից հո-
գաբարձութեան տեսչութիւնը, և յանձնե-
լուս պատճառ ոչ այլ ինչ չէր, եթէ ոչ զգալով,
այսպիսի մի տեղում հոգ. օրինակից զարգի
դրութեան ապահովութիւնը մի ազգային հաս-
տատութեան միջոցով, որ կարելի լինի տալ նրան
աւելի ընդարձակ և աւելի բարեկարգ դրութիւն:
Ահա և հոգաբարձութեան այդ մասին կազմած
օրագրի խօսքերից մի քաղվածը իբրեւ հաստա-
տուն ապացոյց. «Ի խորհրդարանի հոգաբարձու-
թեան նախագահն տարին որ և թեմական տե-
սուչ վիճակիս բարեւ: Արիստակէս Վ. Սեդրա-
կեան ի ներկայութեան բոլոր հոգաբարձուաց
յայտեաց գլխաւորապէս, թէ՛ ընթացի միջոց
ինքն ընդ իրով խնամաւարութեամբ և նվա-
տողութեամբ պահպանեալ է զմիակեան երկու
տղայոց և զմի օրինակից հոգեւոր զարգի քա-
ղաքիս բոտ նիւթականին և բոտ ուսումնակա-
նին, այլ զարդիս չունելով օրինակից զարգի-
րաւոր և զընդարձակ սենեակիս դժուարանայ ըն-
դարձակի զթիւ աշակերտութեան և զսանձան
ուսանելի առարկայից, մանաւանդ զի առ ի յա-
րատե պահպանել զդրութիւնն նոյն զարգից և
առ ի հաստատապէս բարեւել զներքին և զար-
տաքին վարչութիւնն նոյնը... հարկէ ապահովել
զնոսա մշտնջենական հոգեւորութեամբ և խնամա-
տարութեամբ այնպիսի ազգ. վարչութեան,
որպիսին է հոգաբարձութիւնն թեմական զարգի-
ցին մերոց» և այլն:

Այնքան ժամանակի ընթացքում որ եւս մե-
նակ կառավարեցի այդ զարգից ծախս է ունե-
ցել վարժուհի, ծառայի, փայտի, մանր շինու-
թեան, անեղնագործութեան նիւթերի և այլն
ընդամենն 316 բուրլի, որից 150 բուրլին կան-
սիւտօրիայից փոխարինարաւ ստացած զուժար
է: 87 բուրլ 61 կօպ. Կոնստանտնուպոլի միջոցով
ժողոված նուէրներ իսկ մնացածը այլ և այլ տե-
ղերից: Թէ կարճ միջոցում որչափ առաւարդի-
մութիւն էին արել աշակերտութիւնը, մանաւանդ

լուծված ունեին, թիւքաց լրագրութիւնը հասարակական կարծիքը և իրանք թիւքաց պաշտօնական շրջանները աղաղակում էին թէ Ռուսաստանը բռնի կերպով սխեց պատերազմ թիւքաքիայի դէմ, յարձակվեց անակրեալ կերպով թիւքաց պետութեան սահմաններին վրա և այլն, և որ մահմետականների պարտաւորութիւնն է իրանց երկիրը, իրանց հայրենիքը պաշտպանել Պատերազմի երկրորդ շրջանում, երբ ռուսաց զօրքերը ունեցան մի քանի անաջողութիւններ թէ Բալկանեան թերակղզու վրա և թէ Հայաստանում, թիւքաց հասարակական կարծիքը յանկարծ փոխեց իր խօսելու եղանակը։ Առաջ նա իրան խեղճ էր ձևացնում, բայց երբ թիւքաց զօրքերը ունեցան մի քանի աջողութիւններ, թիւքաց լրագրութիւնը յանդուգն դարձաւ, սխեց մեծ մեծ խօսել, պահանջել Ռուսաստանից Ղրիմը և ռուսաց Հայաստանը, մարդարեանալ Ռուսաստանին կատարեանալ տրետեսական անկումն և այլն։ Թիւքաց «Բասիրէտ» լրագիրը առաջարկեց կանգնեցնել Աբդուլ-Համիդի յիշատակին մի արձան Ա. Պօլսի մէջ, որի վրա գրած կը լինէին թիւքաց յաղթող գեներալների անունները՝ Օսման, Սուէյժման և Մուխթար փաշաների։ Չորրորդ անունը դեռ որոշված չէր և լրագիրը սպասում էր ով պէտք է թիւք գեներալներին չորրորդ յաղթող լինի։ Բայց այժմ այդ արձանի վրա երեւի Մուխթար-փաշայի անունն էլ կը ջնջվե....

Հոտաբլբերը է իմանալ թէ այժմ, երբ
 թիւրքաց զօրքերը կրկին ունեցան մեծ անա-
 ջուղութիւններ թէ Հայաստանում և թէ
 Բոլդարիայում, ի՞նչ կարծիք կը սկսեն յայ-
 տնել թիւրքաց լրագրիւնները, ինչպէ՛ս կարտա-
 յայտվի թիւրքաց Հասարակական կարծիքը..

ԱԻՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Իտալական ազգային ժողովի նախագահ
Կրիսպի տեսակցութիւն ունեցաւ Պեշտի մէջ

աւստրո-ուկրաին արտաքին գործերի մի-
նիստրի գրաֆ Անդրաշիկի հետ, Ուկրաինայի
առաջին մինիստր Վոլոման Տրասայի և Ֆի-
նանսների մինիստր Հոֆմանի ներկայութեամբ:

ՖԲԱՆՍԻԱ

Այժմ, երբ Ֆրանսիական ազգային-ժողովը ընտրութիւնները վերջացան Մակ-Մաճօնիկի կառավարութեան համար անաջող կերպով, մարշալին մնում է միայն երկու ելք՝ կամ հրաժարվել իր պաշտօնից, կամ ենթարկվել ֆրանսիայի ցանկութեանը և ընտրել իր նոր մինիստրութիւնը պատգամաւորների ժողովին մէջ ներգործութիւն և ոյժ ունեցող կուսակցութիւններէջ։ Բայց այդ քայլը Մակ-Մաճօնի երբեք չի անի։ Ընտրութիւններէջ յետոյ, ինչպէս հաղորդում է «Լաւասի հեռագրական ընկերութիւնը» Մակ-Մաճօն փորձեց կազմել նոր մինիստրութիւնը անտարբեր մարզիկներէջ, որոնք իրանց համոզմունքով գուրս են բոլոր կուսակցութիւններէջ, բայց այդ քայլը էլ չաջողկեցաւ մարշալ Նախագահին։ Ձեռք կարծում որ Մակ-Մաճօն այնքան անամօթ կը լինի, այնքան համարձակութիւն, մինչեւ անգամ կասե՛նք յանդգնութիւն կուսենայ, որ նորից կարձակէ պատգամաւորների ժողովը և կը կատարէ մի պիտական հարուած, — բայց հաւանական ենք համարում որ մարշալը ստիպված կը լինի հրաժարվել իր պաշտօնից, եթէ նրան չաջողվե՛ կազմել մի չէզօք համոզմունքով անտարբեր և անկողմնապաշտ մինիստրութիւն։ Եթէ ոչ մարշալը այժմ իր բոլոր ջանքերը պիտի գործ դնէ որպէս զլուտով զլուխ բերէ պատգամաւորների ժողովին կենտրոններէջ կազմված մինիստրութիւնը, ինչպէս որ նրան միշտ խորհուրդ էլ տալիս սենատի նախագահ Ուլիթթե-Պակկէ։ Բայց այդ տեսակ մինիստրութեան կազմելը այս րօպէիս մենք անհնարին ենք համարում ֆրանսիայում։

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մասնագէտ արուեստական ատմներ շինելու և ոսկով պլոմբելու:

Ընդունում է 10 ժամից մինչև 4 ժամ: Կարելի է խօսել ամեն լեզուներով:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅՑԻ
ԴՕԿՏՈՐ Լ. ԲԵՐՆԱՐԴՕ-ԲԵՐՆԻ-
ՄԷՔԻՐ
Պատաւոյ անդամ Լոնդոնեան առաջնա-
բուժական Հիւանդանոցներէ

Уолфшутль на углу Кузнецкаго моста и Петровки, домъ Шориной, входъ съ Петровки. противъ гостин. Франція.

16-25 (1)

ԲԱՐՈՒՏՉԵՎ Ի ԿԱՆՏՐՈՆ

ԹԻՖԼԻՍԱՌԻՄ Եռամանակի փողոցում, Ավետիսյանի տուն,
Մուգելու մի հանգեպ:

1 ԱՌՆՈՒՄ Է 4 ԾԱՅՈՒՄ Է 50% բանկային տանուղ (վերաբերել)

2. ԾԱԽՈՒՄ Է 5⁰ ասանոց տոմսակները պայմանաժամի լետա-
ձգութեամբ 12 մինչև 24 ամսով և աւելի, 20 բուրյի բէջով:

3. ԸՆԳՈՒՆՈՒՄ Է զբամանկան ղնումներ՝ տարեկան և կէս տա-
րեկան պայմանաժամերով և մինչև պահանջ (պրօցէնտները կանսո-
րայի հետ համաձայնութեամբ):

4. ՓՈԽ Է ՏԱԼԻՍ գումարներ տոկոսաբեր թղթերի գրառակա-
նով 6 և 10% բորապին կուրսից պակաս, տանող տոմսակների վրա
փոխ է տրվում գումարը մինչև 180 րուբլ և վերցվում է 12% տա-
րեկան ծախսերով: Վ ճաբբր թոյլ է տրվում մաս մաս:

5. ԸՆԴՈՒՆՈՒՄ Է Ուրիշ բանկերից տոմսակների կրկին գրավ
դնելը, վճարում է մնացած փողերը և առնում է տոմսակներ ուրիշ
բանկերի մէջ գրաւ գրած պարտաւորութիւններով:

6. ԱՊՍՀՈՎԱՑՆՈՒՄ Է տանող տոմսակներ հանդաման տիրաժից:

7. Տոկոսաբեր թղթերի գրառականով ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ, սեփական գարանտիայով, կրկնապատկելով սեփականատերերի եկամուտը:

8. ԸՆԴՈՒՆՈՒՄ է պահելու համար բոլոր տսկոսաբեր թրջ-
թերր միջև պահանջ:

Բոլոր տեղեկությունները այն ամենի վրա, որ վերաբերվում է բանկային օպերացիաների, թղթերի գնի, տարած գումարների և տիրաժների մասին, կարելի է անվարձ ստանալ կանաօրայում:

15—21 (1)

ԱՆԱՆՈՎԻ «ՄԱՐԻՆՄԵԱՆ» ՀԱՅՈՑ ՕՐԻՈՐ-
ԴԱԿԱՆ ԳՊՐՈՑԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՐԹԵԼԵԼ աշա-
կերտուհիների համար, բացվելու է ներկայ
1877 թվի նոյեմբեր ամսի սկզբներում։ Կրթու-
թյոցի հիմնով Յովհաննէս Ստէփանեան Անա-
նոպի հաշուով կերտուովն անվարձ 50 աշա-
կերտուհիների հայուհիներին, գլխաւորապէս
որբերին։ Ընդունվում են նոյնպէս և թուշա-
կաւոր աշակերտուհիներ, ամսական 2 լուր-
վճարով, աւերացնելով այդ վճարի վրա 3
լուր՝ տարեկան, զգորցի ուստանական պի-
տոյքների համար։ Ներկայ թվին բացվելու
են երկու պատրաստական դասատուներ և սուս-
ջն դասատուներ։ Իրանց երեխաներին կրթու-
թյոց տալու և մանրամասն պայմաններին մա-
սին տեղեկութիւններ ստանալու ցանկացող
ներ կարող են դիմել զգորցի անուշ Թ. Չի-

ԳԻՆԱՆԱՆՆԵՆ, նոյն իսկ դարոյցի շնորութեան
մէջ, Բէբուսովսկայա փողոցում, ամեն օր
առաւօտեան ժամը 11-ից մինչև 1 ժամ կէ-
սօրից յետոյ: Անթոշակ աշակերտուհիներ
ընդունելութեան խնդրկները կարելի է ներ-
կայացնել ներկայ Հոկտեմբեր ամսի 25-ից
ոչ ուշ: 2—2

ԱՇԽԱՐՀԱՐԱՐ Հայոց կենդանի լինելի
ԳԱՍԵՐ Լ ԽՍՍԱԿՑԻՈՒԻԻՆՆԵՐ:
Հարցնել «ՄՇԱԿ» ԸՐԱԳՐԻ Խմբագրա-
տանը: 9-10

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ւ Ղ

ԹԻՖԼԻՍԻ 1877

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 24-ին)		Բ.	Կ.	ՀԵՌԱՅԻՐ		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ԹՈՒՂԻ		ՓՈՍՏ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	
		Բ.	Կ.								
Ոսկին (սլոյոնայերալը)		8	70	Կովկասի և Ան-		Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը)		1) Ամեն տեսակ թէ նա-		գուռի արակոխից՝ երեք-	
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.		1500	—	զբոսը		9		մակներ, թէ լրացորներ՝		չաբթի և չաբաթ օրերը:	
Հին 20 կ. 72 պր. 1000 մ.		1250	—	Ռուսաստանի		21		Ռուսաստանի և ար-		կուրսերից՝ հինգշաբթի և	
Վարդի 50% առաջի փո-		218	—	Պարտիա		2		ժամանակ ուղարկե-		չաբաթ: Փոթի-Թիֆլի-	
խառնություններ		215	—	Առաջի փո-		3		լու, ընդունվում են ամեն		լիսեան երկաթուղուց	
Երկրորդ 50% վարդի 218		100	—	Պարտիա		4		օր, առաւօտեան 8 ժամից		ամեն օր: Նուրսու արակ-	
Մարտի կուրսը 245—50 ֆ.		9	85	Պարտիա		5		մինչև 12 (բացի կիրակի		ոխից՝ չորեքշաբթի և կի-	
Լոնդոնի կուրսը Օդեսայի		100	—					օրերից)		րակի:	
վրա		6	—							Բն լիվիլի-էի ար-	
Վենայի կուրսը 150 զր.		265	—	ԱՆԳԻՐՎՈՂ ԿԱՍԵԱՆ ՄԱՆ-						կուրսի մը ազդի սերը դեպի	
Գալիսիայի կուրսը		125	—	ԿԱՐԱՐՁԱԿԱՆ ԳՊՐՈՑ						առիական անտաշախոյա-	
Առաջի փոխառություններ		9	—	(Վերայի վրա № 38)						տիկական զրական ամառու-	
Շաքարը քրոջու		8	80							թիւները: Միթէ չէ կարելի	
» միս տեսակը		8	20							հա-	
» շաքարավազը		8	50							մեսուսութեամբ մէկ երկու տա-	
» արագիլներ		13	—							ռով կամ ստղանիչներով ստո-	
» մաքուր վառարան		9	—							րագրել կամ վերջապէս բոյ-	
Բամբակը Երևանու Ա-		8	80							րովին չը ստորագրել թղթակ-	
ռաջի փոխառությունները		8	50							ցութիւնները և յօդուածները,	
Միս տեսակը հին սերմից		7	—							իւրացան օր այդ անում են ե-	
Բուրգը թուրքի		3	50							րայական օրինաւոր լրագրի-	
» թարաքսի		2	—							ների աշխատակիցները:	
Ալիսի Շորաքուր		1	25							—ՇՈՒՇԻ. Գ. Պ. Եթ ըրել	
» Երևանի		14	80							ստացանք և կուղարկենք «Մը-	
Գարին		140	—							չակի» ամբողջ տարւոյ ճամար-	
Մոմը բնաձարի (сгед)		90	—							ները:	
Մետաքսի Նուրիայի		30	—							—ԵՐԵՒԱՆ. Կայծակ (էլի կայ-	
Կախ Երևանի		50	—							ծակ). Ձեր նամակը երկար կար-	
Կոկոնը Նուրիայի (բոմ)		28	—							դաւուց յետոյ, վերջապէս իմա-	
Ֆրիդոնը (շաք)		26	—							նաք թէ երեսնիցն էք գրում:	
» լիվանի										Նամակի մէջ ոչ քաղաքի ա-	
» սարահնդկոյնը										նունն էք նշանակել, ոչ էլ թիւը:	
										Նրաքի վրա էլ պատահամը	
										չատի կողմից դրած դրօշը	
										խոտ անորոշ էր:	